

**ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ**

08.05.2015 18:02



Փաստաբանների Միջազգային Միության (Union Internationale des Avocats) տնօրենների կոմիտեի որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի միջազգային հարաբերությունների գծով խորհրդական, պալատի խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը նշանակվել է այդ միության նախագահի խորհրդական:


Նշենք, որ միությունը հիմնադրվել է 1927 թվականին և աշխարհում ամենահին կառույցն է իր տեսակի մեջ : Ներկայումս միությանը անդամակցում են շուրջ 2.000 անհատ փաստաբաններ և շուրջ 110 պետություններ ներկայացնող 200 փաստաբանական միություններ և ասոցիացիաներ: 1971թ. ի վեր միությունը հատուկ խորհրդատվական կարգավիճակ ունի ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդում: Ներկայումս Փաստաբանների Միջազգային Միության նախագահն է Միգել Լոյինսազը:

ՀՀ Փաստաբանների պալատն անդամակցում է Փաստաբանների Միջազգային Միությանը 2013թ. դեկտեմբեր ամսից:

**Առաջարկվող նորություններ**



**23.11.2014** ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՍՈՖԻԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ



**08.05.2015** ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է AYSOR ATV



**21.07.2017** ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՅՐԵԼ Է ՈՐՈՇՈՒՄ